

5.9. Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը 1999թ.

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ամփոփ տվյալների, 1999թ. հանրապետությունում գործել են 844 նախադպրոցական հաստատություն /ՆԴՀ/: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը նվազել է 1.8%-ով /1998թ.՝ 856/: Գործող նախադպրոցական հաստատություններ հաճախել են 52901 երեխա նախորդ տարվա 56604-ի դիմաց: Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններ /տոկոսով 1-6 տարեկան երեխաների թվաքանակից/ կազմել է 17.8%:

ՆԴՀ-ի գործունեության հիմնական ցուցանիշները

	ՆԴՀ-ի քանակը		ՆԴՀ-ում տեղերի քանակը		ՆԴՀ-ում երեխաների թվաքանակը	
	1999թ.	1999թ. աճը կամ նվազումը %-ով 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով)	1999թ.	1999թ. աճը կամ նվազումը %-ով 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով)	1999թ.	1999թ. աճը կամ նվազումը %-ով 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով)
Ընդամենը	844	-1.4	88700	-1	52901	-6.5
այդ թվում՝ մանկապարտեզ	378	-16	30025	-18.6	14003	-38.3
մսուր - մանկապարտեզ	461	16.1	58120	10.7	38588	16.5
մսուր	1	0	60	-14.3	40	-7
դպրոց - մանկապարտեզ	4	-50	495	-40.4	270	-63.5

ՆԴՀ-ում գործել են 2622 խումբ /1998թ.՝ 2674/, նախորդ տարվա համեմատ նվազումը կազմել է 1.9%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 20 երեխա:

Գործող ՆԴՀ-ներում տեղերի քանակը կազմել է 88700, փաստացի զբաղվածությունը՝ 59.6%-ը:

ՆԴՀ-ի գործունեության տեսակարար ցուցանիշներն ըստ մարզերի

	100 տեղին ընկնող երեխաների թվաքանակը	1 մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակը	1 հիմնարկության հաշվով երեխաների թվաքանակը	1 խմբի հաշվով երեխաների թվաքանակը
Ընդամենը	59.6	7.6	60.7	20.2
Երևան	63.5	9.8	105.2	22.5
Արագածոտն	45.6	9.7	46.8	24.1
Արարատ	54.3	8.1	47.1	21.3
Արմավիր	40		40.4	20.5
Գեղարքունիք	66.5	6.8	46.8	19.6
Լոռի	63.4	8.1	38.1	19.5
Կոտայք	60	8.8	70	18.9
Շիրակ	58.1	5.7	51.5	16.9
Սյունիք	88.5	10	61.2	13.7
Վայոց Ձոր	72	8.6	39.3	27.9
Տավուշ	59	7.4	36.3	18.5

Հանրապետությունում 1999թ. գործած 844 ՆԴՀ-ի դաստիարակչական-մանկավարժական անձնակազմը կազմել է 6934 մարդ:

ՆԴՀ-ի մանկավարժական աշխատողների կրթական մակարդակը տարեվերջին

	Ընդամենը	Բարձրա-	Թերի բարձ-	Միջին մաս-	այդ թվում՝	Ընդհանուր
--	----------	---------	------------	------------	------------	-----------

		գույն	րագույն	նագիտական	մանկավար- ժական	միջնակարգ
Մանկավարժներ, ընդամենը այդ թվում	6934	2372	134	3916	3187	512
վարիչ	803	671	16	109	86	7
դաստիարակներ	4866	1416	103	3159	2652	118
երաժշտական ղեկավար	849	213	12	561	374	63
լոգոպեդ	5	5	0	0	0	0
այլ	411	67	3	87	71	254